

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2015 թ.

N 921-Ն

ք. Ստեփանակերտ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի «գ» կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Հաստատել 2016 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը ըստ ծառատեսակների՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ պահանջարկի դեպքում թույլատրել սույն որոշմամբ հաստատված ծավալները 2017 թվականի հաշվարկային հատատեղի հաշվին գործափայտի մասով ավելացնել մինչև 15 տոկոսի չափով, վառելափայտի մասով՝ 20 տոկոսի չափով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2016 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը

(ամբողջ ծավալը ցույց է տրված խտացված խորանարդ մետրերով)

Հ/Հ	Հատման տեսակը	Ընդհանուր ծավալը	Այդ թվում՝ գործափայտ							Այդ թվում՝ վառելափայտ
			Ընդհանուր ծավալը	Ըստ ծառատեսակների						
				Կաղնի	Հաճարենի	Հացենի	Լորենի	Բոխի	Թխկի, Թեղի	
1	Անտառվերականգնման հատում	39 850	9850	2000	4100	200	500	3000	50	30000
2	Խնամքի հատում	70 650	650	150	100			400		70000
3	Սանիտարական հատում	50 650	650	150	300	50	100	50		50000
	<b>Ընդամենը</b>	161150	11 150	2 300	4 500	250	600	3 450	50	150 000

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ